

Հարցաշարի գնահատման չափանիշները

X դասարան

- 1-ին հարց. 4 ենթահարց է՝ յուրաքանչյուրը՝ 1 միավոր
- 2-րդ հարց՝ 1,3,4՝ 0,5-ական, 2-ը՝ 1, 5-ը՝ 1,5 միավոր
- 3-րդ հարց՝ 1-ը՝ 1 միավոր, 2,3՝ 0,5-ական միավոր, 4-ը՝ 2 միավոր
- 4-րդ հարց՝ 1,2-ը՝ 0,5-ական, 3-ը՝ 2 միավոր, 4-ը՝ 1 միավոր
- 5-րդ հարց՝ 1,2-ը՝ 0,5-ական, 3-ը՝ 3 միավոր

Հարցաշարերի պատասխանները

X դասարան

1. Թարգմանական շարժումը Հայաստանում ծավալվել է V դարում և նպատակ ուներ երկիրն ազատել հունական և ասորական ազդեցություններից, հիմնել հայոց դպրոցներ, թարգմանել քրիստոնեական գլխավոր գրքերը, այլ երկեր՝ փիլիսոփայական, քերականական, հայացնել եկեղեցական ծեսերը, հիմնել հայկական դպրոցներ, սկզբնավորելու հայալեզու դպրություն: Այդ շարժումը սկսվեց և ծավալվեց գրերի գյուտից հետո: Առաջին թարգմանիչներն էին Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը և նրանց աշակերտները՝ Եզնիկ Կողբացին, Հովսեփ Պաղնացին, Կորյուն Սքանչելին, Հովհան Եկեղեցացին, Խորենացին, Դավիթ Անհաղթը և այլք: Առաջինը թարգմանեցին «Աստվածաշունչը», որը ստացավ «թարգմանությունների թագուհի» պատվանունը, այնուհետև թարգմանվեցին Դիոնիսիոս Թրակացու «Քերականությունը», Հովհան Ոսկեբերանի, Պորփյուրի, Պլատոնի, Արիստոտելի գործերը, «Պիտոյից գիրքը» և շատ կրոնական, իմաստասիրական, ճարտասանական գրքեր: Հայ եկեղեցին նշում է Թարգմանչաց տոնը հոկտեմբեր ամսին:

2. 387 թվականի Հայաստանի բաժանումից հետո վերացվում է հայկական պետականությունը և անխուսափելի է դառնում ձուլումը, որին դիմակայելու միակ հնարավոր միջոցը մնում է լեզուն, որի շնորհիվ հնարավոր կլիներ հայացնել մինչ այդ հունարեն, ասորերեն, պարսկերեն իրականացվող քարոզչությունը: Հայոց գրի և գրականության ստեղծումը հրամայական պահանջ էր Հայաստանը հայ պահելու և քրիստոնեությունը ամրապնդելու գործում: Հայոց գրերի ստեղծումով մեկընդմիջտ լուծվեց մեր հինավուրց լեզվի և երկրի պահպանության խնդիրը:

Մաշտոցի կերպարին անդրադարձել են Կորյունը «Վարք Մաշտոցի», Դերենիկ Դեմիրճյանը՝ «Մեսրոպ Մաշտոց» անավարտ վեպով, Պարույր Սևակը «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն» պոեմով, Սիամանթոն «Սուրբ Մեսրոպ» պոեմով, Շիրազը, Կապուտիկյանը և այլք:

Շրջասույթներ՝ Առաջին հայ ուսուցիչ, հայերենի առաջին ուսուցիչ, ուսուցանող Հայոց աշխարհի, Օջականի սուրբ ննջեցյալ:

Մեսրոպ, հայդարերուն դիմաց կեցող՝
Դուն ադամանդյա ապառաժ:(Սիամանթոն)

Սակայն նա ծնվե՛ց, որ Սևո՛ւնդ դառնա:

Ծնվե՛ց, որ ծնե՛նք, Եղա՛վ , որ լինե՛նք,
Եվ անմահացա՛վ, Որ անմահանա՛նք....(Սևակ)

3.Քերթողահայր Մովսես Խորենացին Մաշտոցի և Սահակ Պարթևի հանճարեղ աշակերտն է. ապրել և ստեղծագործել է V դարում: Մեծն պատմահոր շնորհիվ է, որ մենք ճանաչել ենք մեզ, հաստատել ենք մեր անբեկանելի տեղը աշխարհի ժողովուրդների շարքում: Նա առաջինն էր, որ գրեց ստույգ ժամանակագրությամբ, փաստերի համադրմամբ, աղբյուրների հիշատակությամբ: Պատմահոր շնորհիվ մոռացությունից փրկվեցին մեր առասպելների և վիպերգերի մի մասը: «Հայոց պատմությունը» դարձավ հայ ժողովրդի անձնագիրը, այն քննական աշխատություն է, որը բացահայտում է հայ ժողովրդի ծագումը, նրա կատարած փառավոր գործերը, ցույց է տալիս ազգի զարգացման ուղին՝ այն կապելով Արևմուտքի հետ: Մատյանը գրվել է իշխան Սահակ Բագրատունու պատվերով, ում մասին գովասանքով է խոսում և ուրախությամբ հանձն առնում իր «ճաշակին» և «սովորություններին» համապատասխանող պատվերը: «Ողբը» հայոց աշխարհում կատարվող ծանր իրադարձությունների արձագանք-նկարագրությունն է: Պետականությունից զրկված, օտարների և էնպես խորոտ, յուրայինների ասպատակությունների թատերաբեմ դարձած Հայաստանը զրկվել է ամեն ինչից. Ուսուցիչները դարձել են տխմար ու ինքնահավան, կրոնավորները՝ կեղծավոր, ցուցամուլ, իշխանները, դատավորները, զինվորականները..... «Ողբը» ազնիվ, հայրենասեր զավակի ցավի ու դառնության արտահայտություն է:

4.« Եպոսը ժողովրդի բանաստեղծական պատմությունն է, կամ պատմական բանաստեղծությունը»(Մանուկ Աբեղյան):
Հայ ժողովրդի բանաստեղծական պատմության արմատները թաղված են վաղնջական ժամանակներում, իսկ վերջնական սկզբնավորումն ու ավարտուն տեսք ստանալը՝ VIII-Վերջերում, երբ հայ ժողովուրդը ազգային-ազատագրական պայքար էր մղում արաբական զավթիչների դեմ: «Սասնա ծռեր» Եպոսի մասին առաջին անգամ հիշատակել են պորտուգալացի ճանապարհորդներ Անտոնիո Տենրեյրոն և Մեստրե Աֆոնսոն, ովքեր, իրարից անկախ ճանապարհորդելով Արևելքում, եղել են Հայաստանում և սասունցիներից լսել Դավթի և Խանդուբի պատմությունը: Եպոսում առկա են տարրեր «Վահագն ի ծնունդը» առասպելից (կրակ, ջուր), առկա են նաև սուրբգրային նմանություններ:

-Աղջիկ էնպես խորոտ, Որ տասնուչորս ավուր լուսնին կը նմաներ,
Որ յոթ սարի ետևեն կ՛ելներ:!

Արևուն կասեր.«Դու դուրս մ՛ Էլներ, Ե՛ս դուրս Էլնեմ»:

5. Ասույթի հեղինակը Աբովյանն է: Մնացյալը պետք է գրի մասնակիցը: